

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2016թ. մարտի 21-ի նիստի /արձ. 9/

1. Հավանություն տալ ԵԹԿՊԻ-ի մեթոդխորհրդի 2016թ. մարտի 11-ի նիստի որոշմանը և հաստատել ԵԹԿՊԻ-ում «Ավարտական ստուգաշրջան անցկացնելու ընթացակարգը»,

1.1 սույն ընթացակարգը ուժի մեջ համարել հաստատման պահից:

2. Արձանագրել, որ Դերասանի վարպետության և ռեժիսուրայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման նպատակով անցկացված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է սահմանված կարգով և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

2.1 հաստատել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը (N1) և փակ, գաղտնի քվեարկության արդյունքները,

2.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա պրոֆեսոր Ռուբեն

Արտաշեսի Բաբայանը միաձայն ընտրվել է Դերասանի վարպետության և ռեժիսուրայի ամբիոնի վարիչի պաշտոնում,

2.3 հիմք ընդունելով փակ, գաղտնի քվեարկության արդյունքները՝ առաջարկել

ԵԹԿՊԻ-ի ռեկտորին «ԵԹԿՊԻ-ի ամբիոնների վարիչների ընտրության կարգ»-ի 40-րդ կետի համաձայն Ռ. Բաբայանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով:

3. Ինստիտուտի ուսանողներին բժշկական ապահովագրություն տրամադրելու հարցը քննարկել ռեկտորատում: Այն համակողմանի ուսումնասիրելու և հարցի ձևակերպման ու իրականացման հիմնավոր նախագիծ կազմելու նպատակով ռեկտորատի որոշմամբ ստեղծել աշխատանքային խումբ:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան